



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՅ**

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ**

Հետազոտության թեման՝ Ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը
«Մաթեմատիկա» առարկայի դասավանդման
գործընթացում:

Առարկան՝ Մաթեմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Արևիկ Սաղաթելի Մարդոյան

Ուսումնական հաստատություն՝ «Զարենցավանի N2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Երևան 2023

Բովանդակություն

| | |
|---|----|
| Թեմայի արդիականությունը, նպատակը և նշանակությունը | 3 |
| Ներածություն | 4 |
| ԳԼՈՒԽ 1. Միջառարկայական կապերի կիրառմամբ ինտեգրված դասերի կազմակերպումը դասավանդման գործընթացում..... | 5 |
| Ինտեգրված դասերի կազմակերպումը..... | 8 |
| ԳԼՈՒԽ 2 Համակցված դասերի կազմակերպումը..... | 13 |
| Ինտեգրված դասերի տեսակները..... | 16 |
| ԳԼՈՒԽ 3 Միջառարկայական կապերի իրականացումը մաթեմատիկայի ուսուցման գործընթացում..... | 18 |
| Եզրակացություն..... | 25 |
| Գրականություն..... | 27 |

Ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը «Մաթեմատիկա» առարկայի դասավանդման գործընթացում:

«Ջուգորդական (ասոցիատիվ) մտածողություն» գաղափարի էությունն այն է, որ յուրաքանչյուր գիտելիք կարելի է ձեռք բերել զուգորդությամբ, քանի որ գիտելիքների համակարգը զուգորդությունների համակարգ է:

Յու.Ա.Սամարին

Թեմայի արդիականությունը` Արդի ժամանակաշրջանի ուսուցման առանձնահատկություններից է գիտելիքների ինտեգրման միտումը: Ուսուցումը անձնավորության գիտակցությունը ձևավորելու և զարգացնելու հատուկ կազմակերպված գործընթաց է:

Թեմայի նպատակները - Մեր նպատակն է սովորողին ուղղորդել, սովորեցնել հետազոտել, ստեղծագործել, որոնել, դասը յուրացնել հետաքրքիր ու ոչ ստիպողական մեթոդներով: Այսպիսով, ինտեգրված դասը դառնում է նաև գրավիչ դերախաղ, քննարկում, ոչ թե զուտ գիտելիքների ծավալի հաղորդում:

Թեմայի նշանակությունը – Միջառարկայական կապերի ստեղծումը դասժամերին ունի բազմակողմանի նշանակություն: Այն ապահովում է աշակերտների բազմակողմանի զարգացում, հաղորդվող նյութի արագ և հեշտ յուրացում, աշակերտների մոտ հետաքրքրասիրության մեծացում, սեր առարկայի հանդեպ:

Նմանօրինակ դասերը արթնացնում են աշակերտների մոտ աշխույժ մոտեցում ուսուցանվող նյութին և դասաժամը միօրինակ ու ձանձրալի չի անցնում: Այսպիսով մաթեմատիկա առարկան դադարում է հանդիսանալ դժվար, անհասկանալի ու չսիրված առարկա:

Ներածություն

Այսօր Հայաստանում, ինչպես և ողջ աշխարհում, տեղի են ունենում կրթական ոլորտի փոփոխություններ, որոնց նպատակն է կրթությունը մոտեցնել իրական կյանքին: Նոր պահանջներ են առաջադրվել կրթության կազմակերպման եղանակներին ու ձևերին, դրա բովանդակությանը: Փոխվել են կրթության նպատակ, խնդիրները, ուսուցչին ներկայացվող պահանջները: Ուսուցման գործընթացում անհրաժեշտաբար ներդրվում են ուսուցման նոր տեխնոլոգիաներ, մեթոդներ, որոնց միջոցով դպրոցը պետք է պատրաստ լինի պատասխանելու ժամանակի մարտահրավերներին: Հաճախ ենք ականատես լինում դեպքերի, երբ սովորողը զինված է կայուն գիտելիքներով, սակայն անհրաժեշտության դեպքում դժվարանում է դրանք կիրառել: Դրա պատճառներից մեկն այն է, որ դպրոցում սովորողի ստացած կրթությունը խաթարում է աշխարհի ամբողջականության վերաբերյալ իր պատկերացումները: Այն իրականանում է ուսուցման տարաբնույթ մեթոդներով, որը որոշակիորեն կարգավորված գործունեություն է՝ մանակավարժի և սովորողի ուսուցման նպատակներին ուղղված: Այժմ խիստ կարևորվում է, ոչ միայն աշակերտների, այլև ուսուցիչների մասնագիտական ու որակական կարողությունները: Ինտեգրման խնդիրը ոչ միայն մի քանի գիտությունների ուսումնառության ընդհանուր տիրույթների ցուցադրումն է, այլև դրանց կապի միջոցով շրջակա աշխարհի միասնականության ցուցադրումը: Ինտեգրված դասի ընթացքում կարելի է ինտեգրել մանկավարժական գործընթացի ցանկացած բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց: Տարբեր է նաև ինտեգրված դասերի տևողությունը: Բայց առավելաբար օգտագործում են երկու կամ երեք դասաժամ՝ միավորված մեկ դասի մեջ: Ցանկացած ինտեգրված դաս նպատակ ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակներից: Այսպիսի դասի կազմակերպմամբ կարելի է հաղթահարել խնդրի մակերեսային և ձևական ուսումնասիրությունը,

ընդլայնել ինֆորմացիան, փոփոխել ուսումնասիրության շրջանակները, խորացնել հասկացողությունը, հստակեցնել հասկացություններն ու օրենքները, ընդհանրացնել թեման, միավորել սովորողների փորձն ու դրա ըմբռնման տեսական մասը, համակարգել ուսումնասիրված նյութը:

ԳԼՈՒԽ 1. Միջառարկայական կապերի կիրառմամբ ինտերգրված դասերի կազմակերպումը դասավանդման գործընթացում

Դեռևս վաղ տարիքից են երեխաների մեջ ձևավորվում իրենց հատուկ պատկերացումներն աշխարհի մասին: Սակայն դպրոց ընդունվելով, փոխվում է այդ ամբողջական ընկալումը, և դրվում են սահմաններ՝ առարկաների տեսքով: Դպրոցում ձեռք բերած գիտելիքը շարունակում է մնալ որպես կտրտված տեղեկույթ՝ տարբեր ուսումնական առարկաների տեսքով, և սովորողը այդպես էլ չի կարողանում կրթական մյուս աստիճաններում դրանցից հավաքել ամբողջը: Փոխարենն ավելանում է գիտելիքի քանակական կողմը, որը հանգեցնում է մտային ավելորդ ծանրաբեռնվածության: Իսկ չէ՞որ կրթության նպատակն է պատրաստել լայն մտահորիզոնով քաղաքացու, որն օժտված լինի յուրացված գիտելիքները համակարգելու և, ըստ անհրաժեշտության, դրանք կիրառելու կարողությամբ:

Դպրոցում երեխան պետք է ունենա համակարգված և ամբողջական ընկալում բնության և դրա երևույթների վերաբերյալ: Անհրաժեշտ է, որ նա առարկան և երևույթը քննի տարբեր կողմերից՝ զգայական, գեղարվեստական, գիտական և այլն: Շարունակ փոխում է գործունեության ոլորտը, որն էլ հետաքրքիր է դարձնում աշխատանքը: Առարկաների միջև կապերն ավելի ու ավելի են սերտանում, լրացնում միմյանց ու նպաստում երևույթի բազմակողմանի (տարբեր առարկաների տեսքով) դիտարկմանը և ընկալմանը:

Գիտելիքների միավորումը և համադրումը տեղի են ունենում տարբեր եղանակներով: Այն դեպքում, երբ կապեր են ստեղծվում տարբեր ուսումնական առարկաներին վերաբերող գիտելիքների միջև, ընդունված է անվանել միջառարկայական կապեր:

- ❖ Միջառարկայական կապերին դիմելը Կոմենսկին համարում էր «գիտություններից մեծ հարստություններ ձեռք բերելու» լավագույն միջոց և գտնում էր, որ «Այն ամենը, ինչը փոխադարձաբար կապված է, նույնպիսի կապի մեջ էլ պիտի դասավանդվի»:
- ❖ Ի.Հ.Պեստալոցին լուրջ վտանգ էր տեսնում առարկաները «տարանջատելու» մեջ:
- ❖ Ռուս ականավոր մանկավարժ Կ.Դ.Ուշինսկին միջառարկայական կապերի ստեղծումն ու կենսագործումը համարում էր արդյունավետ ուսուցման կարևորագույն նախապայմաններից մեկը:
- ❖ Փիլիսոփա, մանկավարժ Ջոն Դյուն առաջ քաշեց ուսումնական ծրագրերի կառուցման նոր սկզբունք, համալիր թեմաներ, այսինքն՝ տարբեր բնագավառների, տարբեր երևույթների միջև գոյություն ունեցող իրական կապերը հասկանալու, ընդլայնում է դպրոցականի մտահորիզոնը և ձևավորում հնարավորին չափով ամբողջական աշխարհայացք:

Միջառարկայական կապերը նպաստում են տարբեր ուսումնական թեմաների (կամ գիտելիքների) միջև տրամաբանական կապերի ստեղծմանը, իսկ ներառարկայական և ներդասընթացային կապերը նման դեր են կատարում տվյալ առարկայի ներսում: Դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ նոր նյութն ուսումնասիրելու ժամանակ ուսուցիչն օգտագործում է աշակերտների այն գիտելիքները, որոնք ձեռք են բերվել նախորդ դասարանում և տրամաբանորեն կապվում են նոր գիտելիքների հետ, նպաստում դրանց յուրացմանը:

Միջառարկայական կապերի նպատակային օգտագործումը պետք է.

- ✚ պարտադիր լինի բոլոր ուսուցիչների համար,

- ✚ լինի միայն ուսումնական նպատակին հասնելու միջոց,
- ✚ գործադրվի միայն այն ժամանակ, երբ դրա անհրաժեշտությունը կա,
- ✚ ինքնանպատակ չլինի,
- ✚ զուգակցված լինի ուսուցման դասական ձևերի հետ,
- ✚ դասի հիմնական նպատակից չշեղի աշակերտների ուշադրությունը:

Սակայն միջառարկայական և ներառարկայական կապերի օգտագործումը ենթադրում է ուսուցչի պատրաստություն ոչ միայն գիտելիքների հաղորդման եղանակների, այլև հնարավոր ուղիների մասին:

Ուսուցման գործընթացում միջառարկայական կապեր ստեղծվում են տարբեր եղանակներով: Օրինակ՝ ուսուցիչը դասի ընթացքում նոր նյութը պատմելիս կամ բացատրելիս աշակերտներին հիշեցնում կամ հարցնում է, թե մյուս առարկաներից իրենք ինչ գիտեն տվյալ երևույթի վերաբերյալ: Ուսուցիչը, հիմնվելով աշակերտներին հայտնի գիտելիքների վրա, աշխատում է նոր նյութը կամ գիտելիքները հասկանալի դարձնել, ստեղծել ուսումնասիրվող երևույթի համակողմանի, ամբողջական պատկերացում:

Ուսումնական առարկաների փոխադարձ կապերի ապահովումը հրատապ խնդիր է: Հասկանալի է, առանց այդպիսի կապերի ապահովման, սովորողների գիտելիքները կլինեին անբավարար, իսկ դասավանդման հարցերն առանձնապես ոչինչ չէին ավելացնի ուսուցման արդյունավետությանը: Միջառարկայական կապերն ամենևին էլ չեն սահմանափակվում միայն նշված առարկաներով: Այդպիսի կապերը գոյություն ունեն համարյա բոլոր դպրոցական դասընթացներում: Չէ՞ որ օբյեկտիվորեն գոյություն ունեցող երևույթները և փաստերը կարող են ընկալվել ու ուսումնասիրվել միայն միմյանց և այլ երևույթների հետ փոխադարձ կապի և փոխգործողության մեջ: Միջառարկայական կապերը լավ պատկերացնելու համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր թեմա ուսումնասիրվի բոլոր կողմերից, տարբեր կապերի

բացահայտման տեսանկյունով: Այսպես կարող է իրականանալ ուսուցման ինտեգրումը:

Ինտեգրված դասերի կազմակերպումը

Նոր պահանջներ են առաջադրվել կրթության կազմակերպման եղանակներին, ձևերին ու բովանդակությանը: Այս իմաստով փոխվել են կրթության նպատակը, խնդիրները, ուսուցչին ներկայացվող պահանջները:

Ուսուցումը հենվելով առարկայական ուսուցման՝ դարերով մշակված և կատարելագործված ուսումնական ծրագրերի կազմման սկզբունքների վրա, անհրաժեշտ է համարել ինտեգրել, ամրապնդել, ընդլայնել տարբեր առարկաների փոխադարձ կապը, որի ամբողջական ճանաչողությունը ենթադրում է համապատասխան գիտելիքների միավորում: Գիտելիքների միավորումը հիմնական ուղի է իմացության մեջ, քանի որ դրանով ապահովվում է իրականության երևույթների նկատմամբ համակարգային մոտեցման դրսևորումը:

Ուսումնական առարկաների ինտեգրումը թույլ կտա նվազեցնել ուսուցման բովանդակության և հմտությունների կրկնությունը, ավելի շատ սովորեցնել, նոր պատկերացում ձևավորել հիմնական հմտությունների նշանակության մասին, իրականության տարբեր երևույթների տեղայնացված, մեկուսի դիտարկումից անցնել փոխկապակցված, համակարգված ուսումնասիրության: Ելնելով առկա պատկերացումներից, նշենք, որ ինտեգրումը որոշակի ուսումնական բնագավառների նպատակաուղղված միավորում է:

«Ինտեգրում» եզրույթը մեր պատկերացմամբ, մի քանի իմաստներ կարող է ունենալ:

Առաջին՝ «ինտեգրումը» երեխայի մեջ շրջապատող աշխարհի մասին ամբողջական պատկերացման ստեղծումն է: Ինտեգրման արդյունքում երեխան ձեռք է բերում այն

գիտելիքները, որոնք արտացոլում են շրջապատող աշխարհի (որպես համակարգ) առանձին մասերի միջև գոյություն ունեցող կապը: Հենց առաջին քայլերից երեխան աշխարհը պատկերացնում է իբրև մի ամբողջություն, որտեղ բոլոր տարրերը փոխադարձաբար կապված են:

Երկրորդ` «Ինտեգրումը» առարկայական գիտելիքները մի ընդհանուր առանցքի վրա դնելն է: Այս դեպքում ինտեգրումն ուսուցման միջոց է:

Երրորդ` ինտեգրումը դիտարկվում է որպես պայման` աշակերտների ընդհանուր զարգացման մեջ: Սովորողների համար ուսումնասիրվող օբյեկտի դիտարկումը, զննումը մեկուսացված չի մնում: Նա, շնորհիվ տվյալ առարկայի բազմակողմանի ընկալման, համադրում, խմբավորում, կոնկրետացում, դասակարգում, համեմատում է: Մտածողական գործընթացների և առարկաների հետ կատարվող գործողությունների տարբեր եղանակների միջև կապերի հաստատումն ապահովում է սովորողների գործունեության ամբողջականությունը և համակարգվածությունը:

Ինտեգրման խնդիրն արդիական է ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումներով:

- ✓ Ինտեգրված դասերը նպաստում են աշխարհի ամբողջական պատկերի ձևավորմանը, բնության, հասարակության մեջ տեղի ունեցող երևույթների միջև կապերի բացահայտմանն ու ընկալմանը:
- ✓ Ինտեգրումը հենց գիտական կապերի մերձեցման գործընթաց է, որն ուղեկցվում է տարբերակված ուսուցմամբ: Ինտեգրման գործընթացը միջառարկայական կապերի բարձրագույն ձև է և ուսուցման որակապես նոր աստիճան:
- ✓ Ինտեգրված դասերն իրենց հերթին հնարավորություն են տալիս ուսուցչին կրճատելու որոշ թեմաների ուսուցման ժամկետները, բացառել տարբեր առարկաներից կրկնվող նյութերը, կոնկրետ նպատակից ելնելով, մեծ ուշադրություն դարձնել այն թեմաներին, որոնք անհրաժեշտ է համարում ուսուցիչը:

- ✓ Ինտեգրված դասերը թուլացնում են աշակերտների լարվածությունը, հանում են ձանձրույթը, մեծանում է հետաքրքրությունը, քանի որ նրանք մի գործունեության ձևից անցնում են մեկ այլ գործունեության:
- ✓ Ինտեգրումը հնարավորություն է տալիս իրականության տարբեր երևույթների տեղայնացված, մեկուսի դիտարկումից անցնել փոխկապակցված, համակարգված ուսումնասիրության: Վերջին հաշվով, ինտեգրված դասերը խթանում են աշխարհի ամբողջական պատկերացման, բնության և մարդու միասնության ձևավորման գործընթացները:
- ✓ Ինտեգրումը հնարավորություն է տալիս աշակերտին ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ, առաջացնում է հետաքրքրություն ուսման նկատմամբ, բարձրացնում է նրա իմացական կարողությունների մակարդակը: Տարրական դասարաններում ինտեգրման գործընթացն ունի իր առանձնահատկությունները և հիմնականում կրում է կոլեկտիվ բնույթ՝ «ամեն ինչից քիչ-քիչ»:
- ✓ Ինտեգրման հիմնական և պարտադիր պայմաններից է աշակերտների ինքնագործունեության դերի բարձրացումը: Ուսուցչից պահանջվում է լրացուցիչ պատրաստվածություն, բարձր ինտելեկտ, մանկավարժական վարպետություն: Երեխաները ուսուցման վաղ շրջանում ծանոթանում են շատ հասկացությունների, երևույթների, առարկաների, սակայն դրանց մասին ունենում են տարրական պատկերացումներ: Ուսումնառության ընթացքում այդ պատկերացումների շրջանակն ընդարձակվում է, նրանք ստանում են նորանոր գիտելիքներ՝ լրացնելով իրենց իմացածը: Այստեղ է, որ առաջ է գալիս ինտեգրված դասերի հիմնական դժվարությունը, քանի որ հարկավոր է պահպանել յուրաքանչյուր թեմայի դինամիկ զարգացումը՝ սկսած մատուցումից մինչև ամրապնդում:

Այսպիսով, ինտեգրումը ոչ թե պարզապես մեխանիկական միացում է ամբողջի մեջ, այլ համակարգ, որը հանգեցնում է որակական փոփոխությունների, հետևաբար այն տարբեր աստիճաններ պետք է ունենա: Ըստ մտածողների՝ ինտեգրումը կարող է

լինել ներառարկայական և միջառարկայական: Այնուհետև այդ դասակարգմանն ավելացրել են նաև արտառարկայական ինտեգրումը: Այսպիսով, տարբերում են ուսումնական նյութի ինտեգրման երեք աստիճան՝

ա) ներառարկայական ինտեգրում,

բ) միջառարկայական ինտեգրում,

գ) արտառարկայական ինտեգրում (հիմնական և լրացուցիչ կրթության բովանդակության մեկտեղում):

Այս դեպքում ևս հիմնական խնդիրն է՝ ամբողջացնել ու համակարգել սովորած գիտելիքները և դրանց հիման վրա կատարել ընդհանրացումներ: Ինչ վերաբերում է այն կապերին, որոնք ստեղծվում են արտաուսումնական գործունեության ընթացքում, ապա՝ կարելի է ասել, որ դրանք չափազանց տարբեր են իրենց բովանդակությամբ, բազմազան՝ աշակերտի արտաուսումնական գործունեության մեջ:

Որևէ առարկայի պատրաստման տեխնոլոգիական գործընթացի վերլուծությունը ցույց է տալիս, որ, միջառարկայական կապերի նպատակային օգտագործմամբ, ուսուցման գործընթացում տեղի են ունենում որոշակի տեղաշարժեր՝

- Ճանաչողական ու կրթադաստիարակչական առումներով հարստանում է դասի բովանդակությունը,
- առավել հետաքրքիր ու հաճելի է դառնում դասը,
- տարբեր եղանակներով ստացած գիտելիքները միավորելու, մեկ ընդհանուր համակարգի վերածելու համար ստեղծվում են անհրաժեշտ պայմաններ,
- բարձրանում է դասի հագեցվածությունը,
- բացահայտվում են գիտելիքներ կիրառելու ոլորտները,
- կատարվում են հիմնավորված եզրակացություններ,
- բարձրանում է ուսուցչի վարպետության մակարդակը,
- հարստանում է ուսուցչի գիտամեթոդական գինանոցը,
- զարգանում է ուսուցման գործոնը,

- առավել նկատելի են դառնում հետադարձ կապերը,
- ձևավորվում ու զարգանում է սովորողների ճանաչողական ինքնուրույնությունը և այլն:

Ճանաչողական գործունեությունը հնարավոր է միայն դրա զարգացման համար ստեղծված համապատասխան և որոշակի պայմանների առկայությամբ, այս իմաստով հսկայական դեր ունի ուսուցման բովանդակության, ձևերի, մեթոդների ինտեգրումը:

Գործնականում տվյալ գործընթացն ուսուցիչներն իրականացնում են ինտեգրման տարբեր աստիճաններով: Քանի որ ժամանակակից մանկավարժության մեջ փոփոխությունները ձևավորվում և զարգանում են նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով, ուստի կանգ առնենք այն միտումների վերլուծության վրա, որոնք վերջին տարիներին նկատվում են ժամանակակից դպրոցում:

Ինտեգրված դասեր կազմակերպելիս հարկավոր է հաշվի առնել, որ ինտեգրված դասի առանձնահատկությունն այն է, որ այդ դասերը կառուցվում են մեկ առարկայի հիմքի վրա, որն էլ գլխավորն է համարվում: Մյուսները դրան ինտեգրվում են՝ օգնելով ավելի խորը ուսումնասիրելու գլխավոր առարկայի կապերը, ավելի լավ հասկանալու ուսումնասիրվող առարկայի էությունը, կապը առօրյա կյանքի հետ և հնարավորություն ունենալու ստացած գիտելիքները գործնականում կիրառելու:

Ինտեգրված ուսուցման հիմքը բազմաբնույթ մտածողությունն է, որի կիրառումը խթանում է երեխաների գործնական կարողությունների զարգացումը:

Ինտեգրված ուսուցման մեջ գլխավորը թեման է, որը զարգացնում է ուսուցչի ստեղծագործական կարողությունները, տեսական և գործնական հմտությունները, ձևավորում ուսուցիչ-աշակերտ համագործակցությունը, նպաստում դասարանական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, ըստ աշակերտների կարողությունների՝ շերտավորված ուսուցման իրականացմանը: Հարկավոր է հաշվի

առնել թեմայում ներառված տեղեկատվության հաջորդականությունն ու շարունակականությունը:

ԳԼՈՒԽ 2 Համակցված դասերի կազմակերպումը

Անհրաժեշտ է ստեղծել պայմաններ երեխայի բնական ճանաչողական գործունեության զարգացման համար և նրա ինքնահաստատմանը անհատական փորձի կուտակման միջոցով: Երեխան ուսման պասիվ մասնակից է, սովորողները մեծամասամբ հաղորդակցվում են միայն ուսուցչի հետ: Այս իրավիճակի հետևանքներից մեկն էլ այն է, որ դասի պատասխանատուն ուսուցիչն է, իսկ աշակերտների մոտ ձևավորվում է անտարբերություն:

Ուսումնական գործընթացում երեխան ոչ թե պետք է լուռ լսի, այլ պետք է գործի, մասնակցի, աշխատի և պատասխանատվություն ստանձնի: Մենք խնդիր ունենք ուսուցումը դարձնելու աշխատանքային գործընթաց, հակառակ դեպքում փոքր տարիքից երեխաների մեջ սերմանում ենք ծուլություն և անպատասխանատվություն: Մյուս սկզբունքն այն է, որ նոր ուսումնական միջավայրը պետք է լինի բազմանպատակ, շարժուն, բաց: Երեխաները պետք է հնարավորություն ունենան անհատական, զույգերով, փոքր ու մեծ խմբերով աշխատելու, ինչը հնարավորություն կտա ուսումնական գործընթացը դարձնել բազմազան եւ ոչ ձանձրալի: Նոր ուսումնական միջավայրում աշակերտները պետք է հնարավորություն ունենան աշխատել ոչ միայն ուսուցչի, այլև միմյանց հետ: Բացի այդ, երբեմն երեխաները միմյանցից ավելի լավ են սովորում, քան ուսուցիչներից: Վերջին տարիներին խրարուսվում են նմանօրինակ դասերի վարման եղանակներ,բայց ոչ բոլոր առարկաներից ու ոչ բոլոր դասերին կարելի է կիրառել նոր,ինտերակտիվ մեթոդներ ու դասն անցկացնել համագործակցային մեթոդով: Ուստի պետք է հստակ

պատկերացնել տվյալ դասին համապատասխանող մեթոդները, դրանից բխող արժեքային համակարգն ու աշակերտների կարողությունները, քանի որ յուրաքանչյուր դասի համար անհրաժեշտ է կիրառել սոցիալական հմտությունների ու արժեքային համակարգի ընտրության յուրովի մոտեցում: Այս և նմանօրինակ խնդիրներից զերծ մնալու համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր ուսուցիչ հստակ տիրապետի առարկայական չափորոշչային պահանջներով ներկայացվող պահանջներին, իմանա սոցիալական հմտությունների և արժեքային համակարգի կշիռն ու դերը յուրաքանչյուր դասապրոցեին անհատապես: Որպեսզի ինտեգրվեն, այսինքն՝ ճիշտ ձևով միավորվեն ուսումնական գործընթացի բաղադրիչները, պետք է կատարվեն այնպիսի գործողություններ, որոնք ի սկզբանե ունեն ստեղծագործական բնույթ:


Այս նախապատրաստական գործունեության ընթացքում ուսուցիչը որոշում է.

1. ինտեգրված դասի անցկացման իր դրդապատճառներն ու նպատակները
2. համակարգ ձևավորող բաղադրիչների մեջ առաջատարի և երկրորդականի առանձնացումը
3. ինտեգրման ձևերն ու մեթոդները
4. միավորվող նյութերի միջև կապերի բնույթը
5. նյութի հաջորդականության կառուցվածքը
6. նյութի ներկայացման միջոցները
7. դերերի բաշխումը ինտեգրվող առարկաների ուսուցիչների միջև
8. տվյալ դասին սովորողների ուսուցման վերահսկման ձևերն ու տեսակները
9. աշակերտների մեջ դպրոցական տարբեր առարկաների միջև կապ տեսնելու և այդ կապը գործնականում օգտագործելու կարողությունների ու հմտությունների զարգացում

10. սովորողների համար պայմանների ստեղծում՝ կիրառելու իրենց գործնական հմտությունները, ստեղծագործելու կարողությունները, ինքնադրսևորվելու՝ միաժամանակ ձեռք բերելով կայուն գիտելիքներ
11. աշակերտների բանավոր խոսքի, ստեղծագործական մտքի, լսողական հմտությունների զարգացում
12. դասի պլանի կազմում, դասի տևողություն որոշում
13. ըստ մանկավարժի հեղինակային մտածողությամբ իրականացված սցենարի դասապրոցեսի ընթացք

Պարզ և հստակ ձևակերպելով դասի նպատակը՝ ուսուցիչը հավաքում է մեկ դասում միավորվող ուսումնական նյութը, այսինքն՝ որոշում է ինտեգրման բաղադրիչները: Դա արվում է համագործակցող ուսուցչի հետ: Այս փուլում հավաքվում են միայն ուսումնական թեմաներն ու դրանց առանձին մասերը, որոնք պետք է կազմեն ինտեգրման բովանդակային հիմքը: Այստեղ դրսևորվում է նաև ինտեգրմանը մասնակցող ուսուցիչների փոխհամաձայնությունը: Ապա երկու ուսուցիչ սկսում են վերլուծել ընտրված նյութը և բաժանում են այն երկու մասի՝ հիմնական և օժանդակ: Հիմնական նյութը դառնում է դասի՝ համակարգ ձևավորող բաղադրիչը: Այսպիսով, ելնելով ինտեգրված դասի տեսակից և ինտեգրվող առարկաների դասերի տիպերից, ուսուցիչները համատեղ կազմում են իրենց դասի նպատակները՝ զուգակցելով ընդհանուրը մասնավորի հետ, շաղկապելով ինտեգրվող նյութի բովանդակությունները տարբեր առարկաների տեսանկյուններից: Կախված նրանից, թե ինչ ձևով է տեղի ունենում ինտեգրումը (հավասարապես ինտեգրվում են երկու կամ ավելի առարկաներ, ինտեգրման ժամանակ գերակայությունը տրվում է մեկ առարկայի, իսկ մյուսը դառնում է օժանդակ, օգնող առարկա և այլն), կազմվում է դասի պլանը, որոշվում է դասի տևողությունը : Պլանի մեջ հստակորեն ներկայացվում է քայլերի հաջորդականությունը, պարզորոշ կերպով ընդգծվում են առաջատար և օժանդակ առարկաները: Ինտեգրված դասն արդյունավետ անցկացնելու

նախապայմաններից ամենակարևորը դասի ճիշտ պլանավորումն է, որի մեջ, ըստ չափորոշչի եռամակարդակ պահանջների, պետք է ներառվի նաև գնահատման համակարգը:



Այսօրվա դպրոցում ուսուցումը կազմակերպվում է առանձին առարկաներից ծրագրային գիտելիքների հաղորդման եղանակով, ինչը առանձին առարկաներից տրվող գիտելիքների ամբողջությունն է, հետևաբար աշխարհի մասին տալիս է մասնատված, ոչ ամբողջական պատկերացում: Համաաշխարհային մանկավարժական միտքը վկայում է, որ ուսուցման այս ձևը արդյունավետ չէ, և իբրև խնդրի լուծման ելք՝ առաջադրում է ինտեգրված ուսուցումը, որը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթի ընկալմանը, գիտակցմանն ու յուրացմանը: Ինտեգրված ուսուցման ծրագրերը կազմվում են այնպես, որ մի առարկայից գիտելիքները հիմնվում են մեկ այլ կամ մի քանի այլ առարկաներից վերցրած գիտելիքների վրա: Սակայն

ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն :

Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերակվում են միավորված (ինտեգրված) դասերի հետևյալ տեսակները.

- միջառարկայական - երկու առարկաներ միջև
- բազմառարկայական -երկուսից ավել առարկաներ միջև

Որպես միավորող առանցք՝ հաճախ հանդես է գալիս որևէ թեմա, որն ընգրկում է մի քանի առարկա: Վերջին տարիներին ի հայտ եկան միջառարկայական կապերի և ուսուցման գործընթացում դրանց գործնական կիրառության յուրահատուկ դրսևորումներ՝ դասերի նոր տիպեր, մասնավորապես՝ ինտեգրված դասեր, որոնք այլ կերպ կոչվեցին բինար, սինթետիկ, համատեղ դասեր: Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որն իր մեջ ներառում, միավորում է մեկ հասկացության ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և օգնող՝ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ ու մեթոդներ: Օրինակ՝ կարելի է ինտեգրել առարկաների բովանդակությունը՝ պահպանելով առաջատար առարկայի ուսուցման մեթոդները, ինչպես նաև կարելի է ինտեգրել տարբեր առարկաների ուսուցման մեթոդիկաները՝ պահպանելով մեկ առարկայի բովանդակությունը: Այս թեմայի շրջանակներում մենք կանդրադարձանք ինտեգրված ուսուցման այն բաղադրատարրին, որը, հիմնվելով միջառարկայական կապերի կիրառման վրա, հանդես է գալիս որպես սովորողների պոտենցիալ հնարավորությունները զարգացնող ուսուցում՝ նպաստելով նրանց բնական ճանաչողության դրդապատճառների խթանմանը:

ԳԼՈՒԽ 3 Միջառարկայական կապերի իրականացումը մաթեմատիկայի ուսուցման գործընթացում

Քանի որ ուսումնական առարկաները ուսուցանում են գիտությունների հիմունքները, ուստի հրատապ է դառնում նաև ուսուցման գործընթացում միջառարկայական կապերի իրա կանացումը: Ուստի դասապրոցեսի ընթացքում միջառարկայական կապերի պահպանումն ունի բազմաբովանդակ խնդիրներ՝ սկսած աշակերտների մոտ գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձևավորումից, վերջացրած՝ աշակերտի մոտ սովորելու ձգտում առաջացնելու ուսուցման պրոցեսին ակտիվ մասնակցություն ցուցաբերելու ցանկություն սերմանելուց: Համակցված դասերը հզոր խթան են հանդիսանում սովորողի հոգեկան գործունեությունում: Սովորողները սկսում են վերլուծել, համեմատել, որոնել երկու օբյեկտների ու երևույթների միջև կապը: Այն հոգնածությունը, ձանձրույթը, որը սովորողների մոտ նկատվում է միանման դասից, վերանում է, այս դեպքում դասը առաջացնում է հետաքրքրություն, աշխույժ:

Համակցված դասերը հաճախ ուղեկցվում են բացահայտումներով ու հայտնագործություններով, առաջ է գալիս հետազոտական աշխատանքը: Ուզում են ներկայացնել համակցված դասի մի օրինակ իմ փորձից. Հինգերորդ դասարանում կազմակերպեցի համակցված դաս «Մեր թեվավոր բարեկամները» թեմայով. այսպիսի աշխատանքերին նախապատրաստվելու համար բավական երկար ժամանակ է անհրաժեշտ.ես ընտրեցի վաղ գարունը,նպատակ ունենալով պատրաստված թռչնաբները հետագայում տեղադրելու դպրոցի բակի ծառերին.Դասը կազմակերպեցի շրջակա միջավայր,տեխնոլոգիա,ընթերցանություն,արվեստ, մաթեմատիկա միջավայրում.երեխաները իրենց խմբերով ստացան աշխատելու ինքնուրույն հնարավորություն: Նպատակները հնարավորություն են տալիս հասնել

նոր մակարդակի, բացահայտել իր համար տեղեկություններ, մտնել նոր փուլ, իսկ սովորողին՝ զարգացնել ստեղծագործական մտածողությունը, ինքնակրթվելու հնարավորություն ստեղծել: Ընդ որում, ուսումնական նյութերը պետք է լինեն մատչելի, ոչ ծանրաբեռնված, դասարանում ուսումնական գործընթացը պետք է համապատասխանի սահմանային ծավալին: Սովորողը պետք է ստանա այնքան տեղեկություն, որ չխճճվի նյութերում: Շատ կարևոր է տարբերել, թե որ թեմաներից կարելի է անցկացնել դասեր, որտեղ կարող ենք պահպանել միջառարկայական կապեր և որն է լինելու մեր դասի գլխավոր նպատակը: Երբ որոշված է ընդհանուր նպատակը, արդեն առարկաների բովանդակությունից ընտրում են միայն այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են նպատակին հասնելու համար: Սակայն դեռևս ստեղծված չեն բավականաչափ ինտեգրված դասագրքեր, ընդգծված և համակարգված չեն ուսումնական նյութերը, որը ուսուցչի համար դժվարին խնդիր է: Սակայն ուսուցչի համար դժվար չէ նախապես պլանավորել, թե տվյալ առարկայից այս կամ այն թեման, ենթաթեման անցնելիս ինչպիսի կապերեր է ստեղծվելու հարակից առարկաների միջև:

Մեր նպատակն է սովորողին ուղղորդել, սովորեցնել հետազոտել, ստեղծագործել, որոնել, դասը յուրացնել հետաքրքիր ու ոչ ստիպողական մեթոդներով: Այսպիսով, ինտեգրված դասը դառնում է նաև գրավիչ դերախաղ, սեմինար, քննարկում, ոչ թե լուր գիտելիքների ծավալի խցկում: Այսօր մանկավարժությունը հակված է մտածելու, որ նմանատիպ դասերը սովորողի՝ մարդկային դրսևորման հիմք կարող են հանդիսանալ: Այն նպատակ ունի նաև ուսուցչին օգնել հարմարվելու աշխույժ, անհատական հետաքրքրություններով լի սովորողին, մյուս կողմից էլ՝ շատ է օգնում նախագծերով աշխատող ուսուցիչներին: Ինտեգրված դասի արդյունքում սովորողը, ոչ ստիպողաբար, տանը կատարում է առաջադրանքներ, հետազոտում է, ապա ներկայացնում դպրոցում, որը խրախուսվում է: Այստեղ սովորողին չես պարտադրում կատարել, նա այն անում է ինքնակամ, հաճույքով: Կարծում եմ, որ

սուկ պարտադրված տնային հանձնարարությունն արդեն հնացած ձև է: Տարիներ շարունակ դասավանդման փորձը ցույց է տալիս, որ սովորողը հակված չէ տանը իր հետաքրքրությունները մի կողմ դնելու և զբաղվելու տնային առաջադրանք կատարելով, հատկապես, որ ուսուցիչը չի հասցնում յուրաքանչյուր հանձնարարություն միշտ անհատապես ստուգել: Միևնույն ժամանակ, որպես կանոն, բարեխիղճ սովորողը կատարում է տնային առաջադրանքը՝ սահմանափակվելով տեքստը արտագրելով, առաջադրանքը թերի կատարելով: Նման աշխատանքը գիտելիքներ չի ավելացնում: Դրա փոխարեն դպրոցում ճիշտ կազմակերպված դասը հանգեցնում է այն բանին, որ սովորողը տանը ինքնուրույն նման աշխատանքներ կատարի, զբաղվի ինքնակրթությամբ, որը միշտ էլ հմտացնում է: Այժմ խիստ կարևորվում է, ոչ միայն աշակերտների, այլև ուսուցիչների մասնագիտական ու որակական կարողությունները:

Վերջին տարիներին իրականացված ուսուցիչների մասնագիտական զարգացման դասընթացներում ներկայացվել են ուսուցման ակտիվ և համագործակցային մեթոդները: Դրանց կիրառումը այսօր կարևոր է, քանի որ ուսուցումը հնարավոր չէ առանց դասապրոցեսին սո-վորողի ակտիվ մասնակցության: Երեխաները պետք է հնարավորություն ունենան անհատական, գույգերով փոքր ու մեծ խմբերով աշխատելու, ինչը հնարավորություն կտա ուսումնական գործընթացը դարձնել բազմազան եւ ոչ ձանձրալի: Աշակերտները պետք է հնարավորություն ունենան աշխատել ոչ միայն ուսուցչի, այլև միմյանց հետ: Բացի այդ երբեմն երեխաները միմյանցից ավելի լավ են սովորում, քան ուսուցիչներից: Բայց ոչ բոլոր առարկաներից ու ոչ բոլոր դասերին կարելի է կիրառել նոր, ինտերակտիվ մեթոդներ ու դասն անցկացնել համագործակցային մեթոդով: Ուստի պետք է հստակ պատկերացնել տվյալ դասին համապատասխանող մեթոդները, դրանից բխող արժեքային համակարգն ու աշակերտների կարողությունները, քանի որ յուրաքանչյուր դասի համար անհրաժեշտ է կիրառել

սոցիալական հմտությունների ու արժեքային համակարգի ընտրության յուրովի մոտեցում:

Վերոնշյալ խնդիրների լուծման արդյունավետ մեթոդ է .Քանի որ միջառարկայական կապերի հաճախակիությունն ապահովում է հանձնարարված դասի համակողմանի յուրացում մատչելիություն, ձևավորում է բազմակողմանիորեն զարգացած անձնավորություն, բարձրացնում է աշակերտի մոտ ինքնագնահատականն ու ստեղծում անձնավորություն, որն ունի սովորելու կարողություն, ինքնուրույն որոշումներ ընդունելու և դրանք հիմնավորելու կարողություն, նպատակներ դնելու, դրանց հասնելու ուղիներ մշակելու և սեփական անելիքը, գործը ծրագրելու կարողություն և այլն: Իսկ մաթեմատիկան այն գիտությունն է, որ հնարավորություններ է տալիս գրեթե բոլոր դասերին ստեղծել միջառարկայական կապեր մասնավորապես՝ կենսաբանության, ֆիզիկայի, ինֆորմատիկայի, մաթեմատիկայի, աշխարհագրության, երբեմն նաև՝ պատմության, գրականության, և այլ առարկաների հետ:

Միջին դպրոցում, նվազեցվում է հետաքրքրությունը առարկայի նկատմամբ: Ինչպե՞ս կազմակերպել ուսումնական գործընթացը, որպեսզի սովորողները ընկալեն մաթեմատիկան, որպես կյանքի համար անհրաժեշտ և պահանջված գիտություն ցանկացած կրթված մարդու համար: Անհրաժեշտ է ստեղծել պայմաններ երեխայի բնական ճանաչողական գործունեության զարգացման համար և նրա ինքնահաստատմանը անհատական փորձի կուտակման միջոցով: Միջառարկայական կապեր պահպանելով, ուսուցումը կդառնա ավելի դյուրին և շուտ յուրացվող: Աշակերտները կկարողանան ոչ միայն ձեռք բերել գիտելիքներ այս կամ այն թեմայի շրջանակներում, կամ ստանալ զուտ ինչ որ տեղակատվության պաշար, այլև՝ կկարողանա արտահայտել իր յուրացրածը տարբեր դասաժամերին, ազատորեն ընդհանրացումներ կկատարի միևնույն թեմայի միջև տարբեր առարկաների ուսուցման պրոցեսում, կկարողանա համադրել անցած նյութը

և քիմիական, և ֆիզիկական, և կենսաբանական, և ընդհանուր առմամբ, այլ առարկաների տեսանկյունից: Միջառարկայական կապեր պահպանելով, կարելի է դասը կառուցել նոր նյութի հաղոդման, ոչ թե ավանդական դասախոսության, կամ աշակերտի պասիվ մասնակցության եղանակով, այլ՝ աշակենտրոն եղանակով, երբ նոր նյութը ներկայացնի ինքը՝ աշակերտը, մյուս հարակից առարկաներից ունեցած իր գիտելիքների պաշարներով, իսկ բացթողումներն ու շտկումները կատարի ուսուցիչը:

Մաթեմատիկա առարկայից բազմաթիվ դասերում կարելի է կիրառել միջառարկայական կապեր՝ հատկապես մյուս բնական գիտությունների հետ: Դրանք հատկապես նկատելի են ֆիզիկա, քիմիա և կենսաբանություն առարկաների հետ համադրված, որոնք միշտ էլ ուսուցիչների կողմից առանձնակի ուշադրության են արժանացել: Գրեթե բոլոր ժամերին իրականացվում է միջառարկայական կապ մաթեմատիկա առարկայի միջև: Սակայն հիմա կնշենք մաթեմատիկա առարկայում հատկապես այն թեմաները, որոնց դասավանդման պրոցեսում առավելագույնս են արտահայտվում միջառարկայական կապերը նշված առարկաների միջև: Նշեն նաև, որ ոչ բոլոր թեմաները կընդգրկվեն, այլ՝ ավելի կիրառելիները: Քանզի ուսուցումը խիստ անհատական պրոցես է և յուրաքանչյուր ուսուցիչ կարող է այս կամ այն թեմային ունենա իր անհատական մոտեցումներն ու դասավանդման մեթոդները:

Դասընթացների ինտեգրման մեթոդիկան արդյունավետ ճանապարհ է կրթության կատարելագործման համար: Ստորև ներկայացնենք «Մաթեմատիկա» և «Տեխնոլոգիա» առարկաներից ինտեգրված դասի մի նմուշօրինակ.

Թեմա՝ Պարագիծ: Ծանոթ բազմանկյունների պարագծերի հաշվում:

Գերիշխող առարկա՝ «Մաթեմատիկա»

Ինտեգրված առարկաներ՝ «Տեխնոլոգիա», «Մայրենի լեզու», «Կերպարվեստ», «Երաժշտություն», «Ֆիզկուլտուրա» Խնդիրները

- Պարագիծ հասկացության ներմուծում

- Երկրաչափական պատկերների մասին գիտելիքների խորացում
- Ծանոթ երկրաչափական պատկերների պարագծերի հաշվում
- Տրված չափով երկրաչափական պատկերների կտրում
- Գործնական աշխատանքը խնամքով կատարելու հմտության ձևավորում
- Չափումներ կատարելու կարողության և հմտության զարգացում
- Սովորողների ստեղծագործական ունակությունների և համագործակցային որակների զարգացում
- Սովորածը առօրյա կյանքում օգտագործելու կարողությունների մշակում Կահավորումը
 - աշխատանքային նյութեր և գործիքներ
 - սպիտակ, գունավոր թղթեր
 - մատիտ, մկրատ, քանոն, սոսինձ
 - երկրաչափական ձևանմուշներ
 - գունավոր ժապավեններ

Դասի նկարագրությունը

Խթանում Դասն սկսել երկրաչափական պատկերների մասին հանելուկների առաջադրմամբ: Հանելուկների պատասխանները (եռանկյուն, ուղղանկյուն և քառակուսի) գտնելուց հետո համապատասխան հագուստներով ներկայացնում են երկրաչափական պատկերները: Նրանք ողջունում են աշակերտներին և սկսում երկխոսություն՝ պարզելու, թե ինչ գիտեն իրենց մասին երեխաները: Վեճնի դիագրամով համեմատում են պատկերները, նշում նմանությունները և տարբերությունները: Այնուհետև դասարանը բաժանվում է խմբերի՝ ըստ երկրաչափական պատկերների, որոնք լցված են համապատասխան տուփի մեջ: Խմբերը ձևավորվելուց հետո աշակերտները նստում են համապատասխան սեղանի շուրջ և սկսում հերթական փուլը:

Իմաստի ընկալում :Յուրաքանչյուր թիմ պատրաստում է իրեն համապատասխան երկրաչափական պատկերը՝ առաջադրված չափերով.

I թիմ՝ գծել եռանկյուն հետևյալ չափերով՝ 4սմ, 5սմ և 3 սմ կողմերով:

II թիմ՝ գծել քառակուսի 3սմ կողմով:

III թիմ՝ գծել ուղղանկյուն, որի կողմերի երկարություններն են՝ 6սմ և 3սմ:

Պատասխան՝ «Ո՞վ է գլխավորը», որից հետո նմուշօրինակների վրա ներմուծել «պարագիծ» հասկացությունը: Համապատասխան երկրաչափական պատկերի վրա ցուցադրել նրա բոլոր կողմերը, կատարել չափումներ և հաշվել տվյալ պատկերի պարագիծը: Կազմակերպել տարամակարդակ ուսուցում:

Առաջադրանքների առաջին մակարդակին համապատասխան՝ աշակերտներին հանձնարարել կառուցել տրված չափերով ուղղանկյուն և հաշվել պարագիծը:

II մակարդակին՝ կառուցել այնպիսի քառակուսի, որի պարագիծը 20 սմ է:

III մակարդակին՝ հանձնարարել հաշվել այն ուղղանկյան պարագիծը, որի երկարությունը 7սմ է, լայնությունը՝ փոքր է 4սմ-ով:

Կշռադատում T-աձև աղյուսակի օգնությամբ:

| Գիտեինք | Իմացանք |
|------------------------------------|--|
| Երկրաչափական պատկերները չափումներ, | Կարողացանք կատարել համապատասխան կառուցումներ և հաշվել պարագիծը |

Տնային հանձնարարություն. չափել մաթեմատիկայի տետրի երկարությունն ու լայնությունը և հաշվել պարագիծը: Գնահատել թիմերն ըստ սանդղակի:

Այսպիսով՝ ինտեգրված ուսուցումը հնարավորություն է տալիս հասնելու ուսուցման ավելի բարձր նպատակների իրականացմանը և դասի արդյունավետության բարձրացմանը: Դրանք են ստացած գիտելիքները նոր իրավիճակներում կիրառելու կարողությունները, նոր գիտելիքների որոնման և յուրացման համար համապատասխան շարժառիթների ձևավորումը:

Եզրակացություն

Ստացված աշխատանքի արդյունքում երեխաներն աշխատեցին խմբերով, կառուցված կատարել աշխատանքի բաժանում, համագործակել միյանց հետ, կիրառել ստացած գիտելիքները գործնականում Նշված գործողությունները կատարված հետազոտական աշխատանքի շրջանակներում պարզեցինք, որ միջառարկայական կապերը հզոր խթան են հանդիսանում ոչ միայն գիտելիքի յուրացման, կարողությունների և հմտությունների ձեռք բերման, այլև՝ կայուն արժեհամակարգի ձևավորման համար:

Արժեքային համակարգի ձևավորումը խիստ կարևոր է ցանկացած առարկա դասավանդելիս: Կարծում են, որ կիրառելով միաժամանակ ավանդական ու նոր ինտերակտիվ մեթոդները, կարելի է ապահովել բարձր արդյունավետություն ցանկացած առարկայի դասավանդման մեջ: Իսկ համադրելով միջառարկայական կապերը, կարելի է ստանալ լավագույն արդյունք: Միջառարկայական կապերը բարձրացնում են աշակերտների մոտ գիտելիքների, կարողությունների, հմտությունների յուրացումը և ստեղծում արժեքների լայն համակարգ: Որքան էլ գնահատելի ու կիրառելի է անցյալի փորձը, միևնույն է, փոփոխություններն անխուսափելի են, որովհետև դպրոցն ու ուսուցիչը միշտ գործել են կոնկրետ արժեքային համակարգում, կոնկրետ ժամանակում և միջավայրում:

Ամփոփելով՝ հավելենք, որ համակցված դասերի միջոցով դասի գործընթացի կազմակերպումը մանկավարժին հնարավորություն տվեց իրականացնել նպատակաուղղված աշխատանք՝ դրդելով սովորողներին կատարել տրամաբանորեն շաղկապված գործողություններ՝ համեմատում, ընդհանրացում, համադրում, զուգորդում, դասակարգում, վերլուծում: Ապահովեցին հաղորդվող նյութի լիարժեք ու բազմաշերտ ընկալումը՝ խորացնելով և ընդլայնելով առարկայի նկատմամբ սովորողների պատկերացումների շրջանակը, ուսուցման գործընթացը դարձնելով ավելի հետաքրքիր: Իսկ ուսուցման գործընթացի նկատմամբ

հետաքրքրության առաջացումը ինքնին նպաստում է սովորողների ուսման դրդապատճառների ձևավորմանն ու զարգացմանը, որը հանդիսանում է արդի կրթական համակարգի հիմնախնդիրը:

Վերջապես ինտեգրված ուսուցումը հնարավորություն է տալիս ճկունորեն անցում կատարելու մի առարկայից մյուսին՝ միջառարկայական կապերի արդյունքում ամրապնդելով գիտելիք-կարողություն-հմտություն կապը:

Գրականություն

1. Մելանյա Աստվածատրյան, Անահիտ Արնատոյան, Սիրամարգ Վարդումյան, Իզաբելա Օհանովա, Ռուբեն Պետրոսյան, Լենա Երեմյան, «Ինտեգրված թեմատիկ միավորներ», Երևան, 2003թ., 256 էջ:
2. Браже Т.Г. Интеграция предметов в современной школе. //Литература в школе. № 5, 1996, с.59-63.
3. Данилюк А. Я. Учебный предмет как интегрированная система. // Педагогика, №4, 1997, с. 89-92.
4. Зверев Д.И., Взаимная связь учебных предметов, М., Знание, 1977 с. 64-69.
5. Коложвари И., Сеченикова Л. Как организовать интегрированный урок? //Народное образование 1996, № 1, с. 47-51.
6. Чепиков М.Г. Интеграция науки, М., Мысль, 1988, 135 с.